## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունիսի 2026 թվականի N 932-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ 3-ՐԴ ԱՆՑՈՒՂԻ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ՌՈՒԶԱՆՆԱ ՕՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՍՈՖՅԱ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԴՈՅԱՆԻՆ, ՍԻՐԱԿ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԴՈՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԲԱԴՈՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի կողմից 21.02.2026թ. տրված N ԳՄ /3247-2026 տեղեկանքը՝ վերոնշյալ հասցեի ինքնակամ շինությունները սահմանված կարգով Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու մասին, 04.02.2026թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 04022026-05-0100 վկայականը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.14676 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2026 թվականի N 934-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության Գեղարքունիքի Մարզի Հայրավանք գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 8 ապրիլի 2004թ. N 440-Ն որոշումը, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի գյուղ Հայրավանք /կադաստրային ծածկագիր 05-059-0014-0013/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել բնակավայրերի նպատակային նշանակության, 0,01126 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, գյուղ Հայրավանք Վ. Սարգսյան փողոց, թիվ 11/1 հողամաս հասցեն:

2.Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի:

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 19
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 հունիսի 2026 թվականի N 935-Ա

**ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ «ՊԱՏՎԱՎՈՐ ԲԺԻՇԿ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Գավառ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 15-ի թիվ 160-Ա որոշման դրույթներով, ***որոշում եմ***

1.Բուժաշխատողների օրվա կապակցությամբ առողջապահության, բնակչության բուժօգնության և բուժսպասարկման բնագավառում ունեցած ձեռքբերումների և մեծ վաստակի, առողջապահության ոլորտի զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի համար՝

***«ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ***
***ԳԱՐԻԿ ՄԱՐԱՏԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ***

***շնորհել «Գավառի պատվավոր բժիշկ» կոչում:***

2. «Գավառի բժշկական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գարիկ Մարատի Սողոմոնյանին պարգևատրել «Պատվավոր բժիշկ» արծաթյա մեդալով:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 16
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

22 հունիսի 2026 թվականի N 936-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի, 24) կետով, հիմք ընդունելով քաղաքացիներ Վանիկ Ավետիքի Բոթոյանին, Գայանե Գուրգենի Ջանոյանին, Հայարփի Վանիկի Բոթոյանին, Վարդգես Վանիկի Բոթոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Վանիկ Ավետիքի Բոթոյանին, Գայանե Գուրգենի Ջանոյանին, Հայարփի Վանիկի Բոթոյանին, Վարդգես Վանիկի Բոթոյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ Լանջաղբյուր հասցեում գտնվող 0,263 հա մակերեսով 05-038-0502-0009 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 22
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հունիսի 2026 թվականի N 937-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՍ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՍՏԵՓԱՆ ՎԱԼՈԴԻ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ, ՄԱՆՈՒՇԱԿ ՌԱՖԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ, ՍԵՎԻԼ ՍՏԵՓԱՆԻ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՍՏԵՓԱՆԻ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՍՏԵՓԱՆԻ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ, ՎՈԼՈԴՅԱ ՍՏԵՓԱՆԻ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ, ԴՈՒԽԻԿ ՍՏԵՓԱՆԻ ՄԻՍԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Հայր և Որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հատակագծերը և Գավառ համայնքի գյուղ Նորատուս Սևանի փողոց 4-րդ նրբանցք թիվ 9 հասցեի համասեփականատեր Ստեփան Վալոդի Միսակյանի /ծնված 03.02.1957թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.16 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ

1. Գավառ համայնքի 05-071-0034-0025 կադաստրային ծածկագրի՝ Ստեփան Վալոդի Միսակյանին /ծնված 03.02.1957թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /սեփ. Վկայական N 05062026-05-0009/ գույքի բաժանումից առաջացած 0.13291 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքի Գավառ համայնք, գյուղ Նորատուս, Սևանի փողոց, 4-րդ նրբանցք թիվ 9 բնակելի տուն հասցեն:

2. Գավառ համայնքի 05-071-0034-0025 կադաստրային ծածկագրի՝ Ստեփան Վալոդի Միսակյանին /ծնված 03.02.1957թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /սեփ. Վկայական N 05062026-05-0009/ գույքի բաժանումից առաջացած 0.02809 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքի Գավառ համայնք, գյուղ Նորատուս, Սևանի փողոց, 4-րդ նրբանցք թիվ 9/1 հողամաս հասցեն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
23 հունիսի 2026 թվականի N 938-Ա

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**
**ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով ,հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ. արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները, Գավառի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատողի հատուկ եզրակացությունը առ 23.06.2026թ

1. Գավառի համայնքապետարանի 2026թ. բյուջեով նախատեսված 09 բաժնի 3 խմբի 2 դասի / միջին մասնագիտական կրթություն/ գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից համապատասխան ուսումնական հաստատությանը տրամադրել դրամական հատուցում ՝ Գավառ համայնքի ներքոնշյալ բնակչի ուսման վարձը մասնակի մարելու նպատակով

1.1 Ռուզան Ստեփանի Բաղդասարյան 230 000/ երկու հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ
Ընդամենը՝ 230 000/ երկու հարյուր երեսուն հազար / ՀՀ դրամ

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 հունիսի 2026 թվականի N 939-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.00125 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի, Գավառ համայնքի ավագանու 15.06.2026թ. թիվ 6 նիստի թիվ 155-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գավառ համայնքի ք. Գավառ Զ. Սայադյան փողոց 4/4 հասցեի սեփականատեր Արթուր Սամվելի Ղազազյանի /ծնված 19.03.1974թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վկայականը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայական N 26052026-05-0079, տրված 26.05.2026թ./, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 3/5 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող, 0.00125 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ յուրաքանչյուր 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1877.7 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունյոթ ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ արժեքով, ընդամենը 12.5x1877.7=23500 /քսաներեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ և տվյալ միավորի նկատմամբ համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված ծախսերի փոխհատուցման վճարների 35000 /երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ արժեքներով, գնման նախապատվության իրավունքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով

օտարելու Գավառ համայնքի ք. Գավառ Զ. Սայադյան փողոց թիվ 4/4 հասցեի սեփականատեր Արթուր Սամվելի Ղազազյանին:

2. Հանձնարարել աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արա Գևորգյանին՝ օրենքով սահմանված կարգով Արթուր Սամվելի Ղազազյանի /ծնված 19.03.1974թ./ հետ կնքելու Գավառ համայնքի ք. Գավառ Զորավար Անդրանիկի փողոց թիվ 3/5 հասցեում գտնվող, հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք. Գավառ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2026 թվականի N 940-Ա

## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԻՆԵ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 29.05.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 11.06.2026թ/ գույքի նկատմամբ ժառանգ Արմինե Մերուժանի Գասպարյանի /ծնված 23.03.1967թ-ին/ դիմումը, <<Դավիթ Առաքելյան >> ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Լ. Հարությունյան փողոց թիվ 12 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.13 հա, ինչը փաստացի կազմում է 0.13765 հա, որը Արմինե Մերուժանի Գասպարյանի /ծնված 23.03.1967թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 402.50 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1968-1988թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.13765 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Լ. Հարությունյան փողոց թիվ 12 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արմինե Մերուժանի Գասպարյանի /ծնված 23.03.1967թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.13 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00765 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.13765 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 402.50 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1968-1988թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Լ. Հարությունյան փողոց, թիվ 12 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 հունիսի 2026 թվականի N 941-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի, 24) կետով, հիմք ընդունելով քաղաքացիներ Համլետ Գրիշայի Հունանյանին, Գոհար Խաչիկի Փարիսաքոյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերից հրաժարվելու մասին դիմումը, ***որոշում եմ***

1. Քաղաքացիներ Համլետ Գրիշայի Հունանյանին, Գոհար Խաչիկի Փարիսաքոյանին սեփականության իրավունքով պատկանող ք. Գավառ Գանձակ հասցեում գտնվող 0,347հա մակերեսով 05-021-0270-0050 կադաստրային ծածկագրով, 0,212 հա մակերեսով 05-021-0246-0042 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, 0,353 հա մակերեսով 05-021-0259-0177 կադաստրային ծածկագրով խոտհարքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունելուց հետո՝ 15-օրյա ժամկետում այն ներկայացնել կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման համար:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

23 հունիսի 2026 թվականի N 942-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 27 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՇԱՎԻՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ՇԱՐՄԱՂ ՄԻՇԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ԱԼՎԱՐԴ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՐՍԵՆ ՄԵՐՈՒԺԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 21.01.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 27 հասցեի գույքի նկատմամբ ժառանգ /վկայագիր՝ տրված 27.05.2026թ./ Մերուժան Արշավիրի Գասպարյանի /ծնված 10.01.1961թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 27 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.08 հա, ինչը փաստացի կազմում է 0.08274 հա, որը Մերուժան Արշավիրի Գասպարյանին /ծնված 10.01.1961թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողաման է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 307.9 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1950-1993թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08274 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների

ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի Գ.Միքայելյան փողոց 27 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մերուժան Արշավիրի Գասպարյանի /ծնված 10.01.1961թ-ին/, Շարմաղ Միշայի Սիմոնյանի /ծնված 13.12.1963թ-ին/, Ալվարդ Մերուժանի Գասպարյանի /ծնված 29.03.1983թ-ին/, Արմեն Մերուժանի Գասպարյանի /ծնված 06.06.1984թ-ին/, Արսեն Մերուժանի Գասպարյանի /ծնված 09.10.1986թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0. 08 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00274 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08274 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 307.9 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1950-1993թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց, 27 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

23 հունիսի 2026 թվականի N 943-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Զ. ՍԱՅԱԴՅԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 9-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 7 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌՈՒԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԶՈԼՅԱՆԻ, ԱԻԴԱ ԴԵՐԵՆԻԿԻ ՅՈՒԶԲԱՇՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՌՈՒԲԻԿԻ ԶՈԼՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ՌՈՒԲԻԿԻ ԶՈԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՆՇՎԱԾ ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0. 08092 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2 և 3 կետերի պահանջներով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին, թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով 25.05.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, Գավառ քաղաքի Զ. Սայադյան 4-րդ փողոց 9-րդ նրբանցք 7 հասցեի գույքի համասեփականատեր Աիդա Դերենիկի Յուզբաշյանի /ծնված 21.09.1953թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Զ. Սայադյան 4-րդ փողոց 9-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.15292 հա, որից 0.07200 հա հողատարածքը օրենքի ուժով հանդիսանում է Աիդա Դերենիկի Յուզբաշյանին /ծնված 21.09.1953թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասը, իսկ դրան կից փաստացի ավել օգտագործվող 0.08092 հա հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և ուղղակի վաճառքի կարգով՝ 1 քմ-ի համար հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 262.2 ՀՀ դրամ, օտարել նշված հասցեի գույքի համասեփականատեր Աիդա Դերենիկի

Յուզբաշյանին /ծնված 21.09.1953թ-ին/ և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 461․66 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1990թ-ին/ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.15292 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, ***որոշում եմ***

1. Վերականգնել Գավառ քաղաքի Զ. Սայադյան 4-րդ փողոց 9-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ռուբիկ Հովհաննեսի Զոյանի /ծնված 02.02.1950թ-ին/, Աիդա Դերենիկի Յուզբաշյանի /ծնված 21.09.1953թ-ին/, Հովհաննես Ռուբիկի Զոյանի /ծնված 26.08.1976թ-ին/, Գևորգ Ռուբիկի Զոյանի /ծնված 17.01.1979թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 0.06 հա մակերեսով հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.012 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.07200 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 461․66 քմ մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1990թ-ին/ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. Գավառ քաղաքի Զ. Սայադյան 4-րդ փողոց 9-րդ նրբանցք 7 հասցեում գտնվող 0.07200 հա հողատարածքին կից փաստացի ավել օգտագործվող 0․08092 հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Գավառ քաղաք, Զ. Սայադյան 4-րդ փողոց 9-րդ նրբանցք 7/1 հասցեն և ուղղակի վաճառքի կարգով օտարել Ռուբիկ Հովհաննեսի Զոյանին /ծնված 02.02.1950թ-ին/, Աիդա Դերենիկի Յուզբաշյանին /ծնված 21.09.1953թ-ին/, Հովհաննես Ռուբիկի Զոյանին /ծնված 26.08.1976թ-ին/, Գևորգ Ռուբիկի Զոյանին /ծնված 17.01.1979թ-ին/ հողամասի 1 քմ-ի համար կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 262․2 /երկու հարյուր վաթսուներկու ամբողջ երկու տասնորդական/ ՀՀ դրամ՝ ընդամենը 809․2x262․2=212200 /երկու հարյուր տասներկու հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին վճարելու պայմանով:
3. 1990թ. ինքնակամ կառուցված 54․66 քմ մակերեսով անավարտ ավտոտնակը ճանաչել որպես ինքնակամ շինություն:
4. Բնակելի տանը տրամադրել Գավառ քաղաք, Զ. Սայադյան 4-րդ փողոց, 9-րդ նրբանցք, 7 հասցեն:
5. Հանձնարարել աշխատակազմի համապատասխան աշխատակցին՝ օրենքով սահմանված կարգով Ռուբիկ Հովհաննեսի Զոյանի /ծնված 02.02.1950թ-ին/, Աիդա Դերենիկի Յուզբաշյանի /ծնված 21.09.1953թ-ին/, Հովհաննես Ռուբիկի Զոյանի /ծնված 26.08.1976թ-ին/, Գևորգ Ռուբիկի Զոյանի /ծնված 17.01.1979թ-ին/ հետ կնքելու 0․08092 հա մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ․ Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 23
ք․ Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
24 հունիսի 2026 թվականի N 944-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 63 ՀԱՍՑԵՈՒՄ ԼԵՎԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻՆ, ԲԱՎԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՄԱՆՈՒԿ ԼԵՎԻԿԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԹԱԹՈՒԼ ԼԵՎԻԿԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով 21.06.2011թ. տրված սեփականության իրավունքի թիվ 2732276 վկայականը, որակավորում ունեցող անձ Խաչատուր Վաhրիճի Ավեյանի /որակավորման վկայականի համար 0346՝ տրված 26.02.2015թ./ կողմից 04.06.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026LSEHXK ծածկագիրը, «Խաչատուր Ավեյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ քաղաք Չարենցի փողոց 63 հասցեում գտնվող, 2015թ. ինքնակամ կառուցված 175.22 քմ արտաքին /141.01 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը և 4.97 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը 180.19x1209=217900 /երկու հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 24
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հունիսի 2026 թվականի N 945-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N233-Ն որոշման պահանջներով

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք ք. Գավառի վարչական սահմաններում գտնվող /կադաստրային ծածկագիր 05-001-0470-0032/ գույքին տրամադրել ՀՀ Գեղարքունիքի մարզ Գավառ համայնք ք. Գավառ Հացառատ թաղամաս Հ. Աբրահամյան փողոց 3-րդ անցուղի թիվ 3/1 հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 24
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
24 հունիսի 2026 թվականի N 946-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N233-Ն որոշման պահանջներով, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք ք. Գավառի վարչական սահմաններում գտնվող /կադաստրային ծածկագիր 05-001-0129-0014/ գույքին տրամադրել ՀՀ Գեղարքունիքի մարզ Գավառ համայնք ք. Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 1-ին նրբանցք թիվ 1/1 հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 24
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

24 հունիսի 2026 թվականի N 947-Ա

## ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՈՍԿԵՀԱՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 18.05.2006թ. 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ Կառավարության 05 հունվարի 2022թ. 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 30082024-05-0005 վկայականը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.0477 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ համայնք գյուղ Բերդկունք Կենտրոնական 4-րդ փողոց 2/1 հասցեում ինքնակամ կառուցված 194.0 քմ արտաքին /154.62 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը 194.0x1028=199500 /մեկ հարյուր իննսունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 24
ք. Գավառ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am


**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 հունիսի 2026 թվականի N 948-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 14 ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ 16 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի և «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 29.03.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026Z9U4ZM ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ համայնք գյուղ Սարուխան Գ. Դարբինյան փողոց 14 և Գավառ համայնք գյուղ Սարուխան Գ. Դարբինյան փողոց 16 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել և միավորված գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Գ. Դարբինյան փողոց, 14-16 հասցեն:

2. 2018թ-ին ինքնակամ կառուցված 1568.30 քմ արտաքին /1239.60 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը 1568.30x1028=1612300 /մեկ միլիոն վեց հարյուր տասներկու հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

3. 2025թ-ին ինքնակամ կառուցված 189.10 քմ մակերեսով ավտոտնակը և 26.77 քմ մակերեսով պարիսպը ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 24
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

24 հունիսի 2026 թվականի N 949-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 134/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐԹՈՒՐ ՊԱՐԳԵՎԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՈՒ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25042019-05-0020 վկայականը, որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 10.06.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 202VFVPN2 ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ***

1. Գավառ համայնք գյուղ Սարուխան Հ. Աբրահամյան փողոց 134/1 հասցեում 2013թ. ինքնակամ կառուցված 233.0 քմ արտաքին /175.7 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը 233.0x1028=239600 /երկու հարյուր երեսունինը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ և 2019թ. ինքնակամ կառուցված 1.0 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/

քառակուսի մետրի համար 616.8 /վեց հարյուր տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը 1.0x616.8=620 /վեց հարյուր քսան/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 24
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2026 թվականի N 950-Ա

## ՍՆՈՒՆԴԻ ՓԱԹԵԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովի առ 25.06.2026 թ., ***որոշում եմ***

1. Գավառի համայնքապետարանի 2026 թ. բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի այլ սոցիալական ծրագրեր գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ դրամական արժողությամբ սնունդի փաթեթ

1.1 Հակոբ Գուրգենի Վանեցյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.2 Յուրիկ Ավետիսի Թաթոյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.3 Սիրվարդ Ավետիկի Հապետնակյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.4 Մանիշակ Վարդեվանի Ղարիբյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.5 Անուշ Վարդեվանի Ղարիբյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.6 Նելլի Վելգենի Նիկողոսյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.7 Թամար Վահագի Մանուկյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.8 Սոֆիկ Արեստի Մուսեսյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.9 Արայիկ Պետրոսի Բադալյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.10 Անուշ Նորիկի Հայթյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.11 Հարություն Սամվելի Դանաչյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.12 Բալասան Մերուժանի Հարությունյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.13 Մելանյա Բեգլարի Նավոյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.14 Քրիստինա Վեմիրի Ասատրյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.15 Սուսաննա Նիկոլայի Կագրամանյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

1.16 Սառա Միշայի Փոքրիկյան 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

2. 319 680 /երեք հարյուր տասնինը հազար վեց հարյուր ութսուն/ ՀՀ դրամ փոխանցել <<Սառնա>> ՍՊ ընկերությանը՝ թվով 16 շահառուներին սնունդի փաթեթները մատակարարելու նպատակով:

Ընդամենը՝ 319 680 /երեք հարյուր տասնինը հազար վեց հարյուր ութսուն/ ՀՀ դրամ

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 25
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

25 հունիսի 2026 թվականի N 951-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 4 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ԱՐԵՎԵԼՔ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 8 ՀՈՒՆԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 892-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 23.06.2026թ Ն Կ-23062026-05-0094 որոշումը, Գավառ համայնքի ղեկավարի 8 հունիսի 2026 թվականի N 892-Ա որոշումը, ***որոշում եմ***

1.Գավառ համայնքի ղեկավարի 8 հունիսի 2026 թվականի N 892-Ա որոշման նկարագրական մասում «Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով» արտահայտությունից հետո ավելացնել «ՀՀ Կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 731-Ն որոշման պահանջներով» արտահայտությունը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 25
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 հունիսի 2026 թվականի N 952-Ա

**ՉԱՓԱՀԱՍ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՎՈՐԳ ՄԱՆՎԵԼԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՄՈՐԸ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ գլխի 9-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 24.06.2026թ. նիստի արձանագրությունը, ***որոշում եմ***

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2026թ. փետրվարի 13-ի օրինական ուժի մեջ մտած վճռով հոգեկան հիվանդության պատճառով անգործունակ ճանաչված չափահաս քաղաքացի Գևորգ Մանվելի Սիմոնյանի /անձնագիր՝ AX 0619032, տրված՝ 06.02.2025թ. 003-ի կողմից/ իրավունքների ու շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով նրա մորը՝ Գոհարիկ Միշայի Սիմոնյանին /անձնագիր՝ AX 0666385, տրված՝ 24.03.2025թ. 003--ի կողմից/ նշանակել նրան խնամակալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 26
ք. Գավառ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
26 հունիսի 2026 թվականի N 953-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 14 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ ՀԱՐԱՎ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, ՀՀ Կառավարության 18 մայիսի 2006 թվականի N 731-Ն որոշման հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 05.06.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026EUR42H ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ Մամիկոն Ռաֆիկի Չատիկյանի դիմումը՝ Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 14 հասցեից բազմաբնակարան բնակելի շենքից հարավ ընկած հատվածում իր կողմից ինքնակամ կառուցված 45,20 քմ. արտաքին /45,10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային

օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ***որոշում եմ***

1. Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 14 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00451 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 45,20 քմ. արտաքին/45,10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2.Գավառ համայնքի Ազատության փողոց թիվ 14 բազմաբնակարան բնակելի շենքից հարավ գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00451 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 45,20 քմ. արտաքին /45,10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք Ազատության փողոց թիվ 14/2 հասցեն: 5.Օրինականացված 45,20 քմ. արտաքին /45,10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Մամիկոն Ռաֆիկի Չատիկյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

2026թ. հունիսի 26
ք. Գավառ